

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԹՎԱԳՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՇՈՒՐՋ*

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Ազաթանգեղոս, «Հայոց պատմություն», պատմագրություն, քաղաքական օրակարգ, հուշարձանի թվագրում, քաղաքական շարժառիթ, Գրիգոր Լուսավորիչ, Խորենացի, Կորյուն, «Ոսկեդար»:

Ամփոփում

Միջնադարյան պատմագրության հուշարձանների ստեղծման ժամանակը որոշելիս, որպես կանոն, առաջնային նշանակություն ունեն հենց հեղինակների վկայությունները: Սրանից ելնելով՝ Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը», սկսած V դարից, ավանդաբար համարվել է հայ առաջին պատմագրական աշխատությունը և վերագրվել IV դարի սկզբին: Սակայն պատմիչների վկայությունները երբեմն նաև չեն համապատասխանում իրականությանը: Նման դեպքերում պատմական երկի թվագրման համար դիմում են բանասիրական, տեքստաբանական, պատմական-աղբյուրագիտական փաստարկների:

Ժամանակակից գիտությունը, հենվելով նմանատիպ ուսումնասիրությունների վրա, վերանայել է Ազաթանգեղոսի Պատմության թվագրումը՝ այն սեղափոխելով V դար: Այնուամենայնիվ, նույնիսկ միևնույն մեթոդների կիրառման դեպքում տարբեր հետազոտողներ այս հարցում եկել են իրարամերժ եզրահանգումների. պատմագրական այս երկի ստեղծման ժամանակը «տատանվում է» 410-ից 465 թթ. միջակայքում: Կան նաև ավելի վաղ թվագրման IV դարի կողմնակիցներ, ովքեր կարծում են, որ տեքստը ի սկզբանե ամբողջությամբ կամ մասամբ գրված է եղել հունարենով, ինչը թվագրման տատանումների «ամպլիտուդը» դարձնում է մինչև մեկուկես դար:

Գնահատելով նման ուսումնասիրությունների կարևորությունը պատմագրական հուշարձանի ժամանակագրության խնդիրը լուծելու հարցում ընդհանրապես պետք է նշել, որ դրանց արդյունքները չեն կարող վերջնական դիտվել Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման ճշգրիտ ժամանակը որոշելու համար: Ավելին՝ դրանք կարող են ապակողմնորոշել, խոչընդոտ հանգիստանալ այլ կարևոր հարթություններում հարցադրումների և ուսումնասիրությունների համար, ներառյալ այս պատմական երկը որպես սկզբնաղբյուր գնահատելու հարցում:

IV–V դարերի սահմանագծին Հայաստանի քաղաքական օրակարգի կենտրոնական կետը քրիստոնեության վերջնական տարածումն ու ամրապնդումն

* Ներկայացվել է 11. VI. 2025 թ., գրախոսվել է 16. VI. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

էր: Ըստ էութեան, այս նպատակն է հետապնդել հայ գրականութեան «Ոսկեդարն» ամբողջութեամբ, որի կարևորագույն բաղադրիչներից է Ազաթանգեղոսի Պատմութիւնը: Որևէ թվագրում հիմք չընդունելով՝ այս երկը նախևառաջ պետք է դիտարկել քաղաքական տեսանկյունից՝ որպէս իր ժամանակի հիմնական օրակարգը սպասարկող միավոր՝ ելնելով առաջին հերթին դրա ստեղծման քաղաքական դրդապատճառներից և գործառութային դերից: Նման ուսումնասիրութեան արդյունքները կարող են կարևոր հիմք դառնալ նաև այս հուշարձանի թվագրման կամ առկա թվագրումներից որևէ մեկի հաստատման համար:

Նախաբան

Մատենագրական հուշարձանների թվագրման ճշգրտութիւնը մեծ նշանակութիւն ունի աղբյուրի գրութեան առաջնային քաղաքական և այլ շարժառիթների որոշման, հաղորդած տեղեկութիւնների իմաստավորման, ստուգութեան, ի վերջո, պատմութեան համար որպէս վստահելի շինանյութ օգտագործելու համար:

Խնդիրն ավելի կարևոր է հայ մատենագրութեան սկզբնավորման, միաժամանակ նրա բարձրակետը դարձած և «Ոսկեդար» հռչակված V դ. համար:

Ընդհանրապէս մշակութիւն ու դրա մաս համարվող կրոնը քաղաքականութեան, այն իրականացնող իշխանութեան (հոգեւոր թե աշխարհիկ) սպասավորը, գործիքն է¹: Ըստ այդմ՝ այսօրվա ընկալմամբ որպէս մշակութային փաստ մեզ հասած ու ներկայացող «Ոսկեդարը» այն քայլերի ու ձեռնարկումների ամբողջութիւնն է, որով ստեղծվեցին ազգային գոյատուման քաղաքական մեխանիզմները: Դրա իրագործման միջոցը համարվել է դեռ IV դ. սկզբին պետական կրոն հռչակված, սակայն այդպէս էլ հասարակական շերտերի մեջ չարմատավորված քրիստոնեական կրոնի ամրապնդման և ջերմեռանդ հավատի² վերածման խնդրի լուծումը՝ որպէս աշխարհիկ-պետական և, մասնավորապէս, հոգեւոր-եկեղեցական իշխանութեան պահպանման առհավատչյալ:

Ուրեմն՝ նույն այդ «Ոսկեդարը» ներկայացնող բոլոր ձեռնարկումներն ու քայլերը, նաև թարգմանական և ինքնուրույն մատենագրական հուշարձանների ստեղծումը առաջին հերթին դիտարկելի են որպէս իշխանութեան խնդիր հետապնդող միասնական մի Ծրագրի³ բաղադրիչներ՝ IV–V դդ. սահմանագլխից գոյացած հիմնական քաղաքական այդ օրակարգի հետապնդման տեսանկյունից, դրա հետ իրենց անմիջական կապով: Ինչպէս թարգմանական, այնպէս էլ ինքնուրույն գրական/մատենագրական հուշարձանների ճշգրիտ թվագրումը և ժամանակային հաջորդականութեան պարզումը⁴ V դ. համար կարող էր գաղափար տալ այն մասին, թե, պայմանավորված հիմնական օրակարգային

¹ Տե՛ս Ս ա ռ գ ս յ ա ն. 2023, 168–172:

² Օգտագործում ենք Հայաստանում քրիստոնեութեան տարածման մակարդակի մասին Բուզանդի ճիշտ գտած բնորոշումը. «Զի ի վաղնջուց, յորմէ հետէսոին նոքա զանուն քրիստոնէութեան, լոկ միայն իբրև գկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց՝ և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան ...» (Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս. 1933, 43–44):

³ Այդ Ծրագրին է վերաբերում մեր հոգվածը. տե՛ս Ս ա ռ գ ս յ ա ն. 2024ա, 48–73:

⁴ Որպէս իր հետազոտութիւնների արդյունք՝ ժամանակագրական այդպիսի մոտավոր մի ցանկ տալիս է Գ. Զարբհանալյանը. տե՛ս Զ ա ռ գ ս յ ա ն ա լ յ ա ն. 1889, ԻԴ–ԻԵ:

խնդրով, ժամանակին դրանց ինչպիսի առաջնահերթություններ են տրվել, որն է եղել հիմնական քաղաքական խնդիրը լուծելու քայլերի հաջորդականությունը, տրամաբանությունը: Այս դեպքում քաղաքական հիմնական օրակարգի հրատապությունը և կենսականությունը առանձնացող՝ օրվա քաղաքական խնդիրների հետ պատմագրության կապը շատ ավելի անմիջական է, քան հետագա դարերում: Ըստ այդմ թվագրման անգամ ոչ մեծ տարբերությամբ, գիտականորեն բոլորովին այլ կերպ կարող են իմաստավորվել, գնահատվել պատմիչների ներկայացրած նյութն ու վկայությունները:

Թվագրման առաջին հիմքը, բնականաբար, պատմիչների հեղինակային վկայություններն են: Երբեմն դրանք գիտության մեջ կասկածի տակ են առնվել, և հատկապես՝ բանասիրական, տեքստաբանական, պատմական-աղբյուրագիտական բնույթի՝ առաջին հայացքից տպավորիչ, համոզիչ թվացող փաստարկներով: Որքան էլ տվյալ խնդրի համար կարևոր ու անհրաժեշտ, սակայն միշտ էլ, որ դրանք միանշանակ ու վերջնական արդյունք են տալիս⁵: Չնայած կատարված հսկայածավալ և օգտակար աշխատանքին՝ այդ հիմքերով Ագաթանգեղոսի Պատմության թվագրումը տատանման մեծ «ամպլիտուդ» ունի:

Ագաթանգեղոսի Պատմության թվագրումները բանասիրական և պատմական հարթություններում

Ագաթանգեղոսի Պատմության հեղինակային հավաստիացումների հիման վրա՝ այն հայ պատմագրության առաջնեկն է համարվել ի սկզբանե՝ դեռ V դ. ճանաչվելով որպես IV դ. առաջին տասնամյակների հուշարձան: Ահա Ղազար Փարպեցու արձանագրումը. «Սկիզբն առաջին գրոց պատմութեանն Հայոց, որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգիւ այրն երանելի Ագաթանգեղոս, սկսեալ ի մահուն Արտեանայ յԱրտաշէ յորդոյ Սասանայ բռնաւոր Ստահրացոյն. և զգարձ աշխարհիս Հայոց յանգիստութենէ կռապաշտութեան յաստուածագիտութեան ճշմարտութիւն ի ձեռն սրբոյ նահատակին Գրիգորիսի. յորոյ անուն և զգիրսն անուանեալ կոչեն Գրիգորիսի»⁶:

Մյուս պատմիչները նույնպես ընդունում են Ագաթանգեղոսի պատմության ժամանակագրորեն առաջինը ու IV դ. գրված լինելու հանգամանքը, և այդ համոզումն է իշխել ընդհուպ մինչև նոր ժամանակներ: Ժամանակակից գիտությունը վաղուց, կարծես, մի ընդհանուր հայտարարի է եկել, որ այն իրականում ստեղծվել է V դարում, սկզբնապես (կամ զուգահեռ) ունեցել է նաև Փարպեցու նշած «Գիրք Գրիգորիսի» անվանումը⁷: Տվյալ համաձայնությունը, սակայն, թվագրման ավելի որոշակիացում չի ենթադրում⁸:

⁵ Հիմնականում հենց նման փաստարկներով էր XIX դ. վերջերից ծայր առած գերքննադատությունը վերանայում միջնադարյան պատմիչների ժամանակը. օրինակ՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» V դ. տեղափոխվում հետագա VII, VIII, IX դդ. (տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 2006, 23–24):

⁶ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան. 1904, 1:

⁷ Այդպես կոչվում է նաև Սեբեոսի երկում (տե՛ս Պատմութիւն Սեբեոսի. 1979, 150):

⁸ Հայոց պատմության ակադեմիական հրատարակությունները (որպես գիտական մտքի ամփոփում) խուսափում են տարեթվային որոշակիացումից. առաջինը նշում է

Ազգաթանգեղոսի Հեղինակային վկայություններն իր ապրած և գործած ժամանակի (IV դ. սկիզբ) մասին վավերական չհամարելու տեսակետի ընդունումը և տարածումը, բնական է, որ պետք է գիտություն մեջ հարուցեր պատմագրական այս երկի ստեղծման իրական ժամանակի, հեղինակի, տեղեկատվական, լեզվական, ոճական և այլ աղբյուրների որոնման հզոր խթան ու անհրաժեշտություն: Եվ այդ ուղղություններով ահռելի օգտակար աշխատանք է կատարվել՝ թերևս արդեն լիովին բացահայտելով նրա բազմաբնույթ բնագրական աղբյուրներն այլ հուշարձանների հետ և թե որ հաղորդումներն են հավաստիության քննություն բռնում պատմագիտության ետնախորքում: Առաջին հերթին գրություն ժամանակը պարզելուն նպատակաուղղված բանասիրական, տեքստաբանական, պատմական-աղբյուրագիտական բնույթի հետազոտություններով ներկայացված փաստարկները երեք հիմնական հարթությունում են առանձին կամ համակցված.

Ա) ավելի հստակ թվագրվող՝ Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատության հետ Ազգաթանգեղոսի բնագրական աղբյուրները,

Բ) Կորյունի և Եղիշեի երկերում Գրիգոր Լուսավորչի անունը չհիշատակելը,

Գ) «Հունասերների» և «ասորասերների» ներեկեղեցական պայքարը:

Ըստ պատմիչների միահամուռ պնդման՝ նաև տրամաբանորեն, Աստվածաշնչի թարգմանությունն է եղել գրերի ստեղծման առաջնային խնդիրը: Ուստի՝ դա իրավացիորեն պետք է գիտվեր Ազգաթանգեղոսի Պատմության (հայերեն բնագրի) ստեղծման ժամանակագրական ներքին սահմանագիծը⁹:

Բարսեղ Սարգիսյանն անում է Ազգաթանգեղոսի երկի ամենավաղ թվագրումը՝ համարելով, որ այն գրվել է 426–430 թվականներին Աստվածաշնչի առաջին թարգմանությունից անմիջապես հետո¹⁰, իսկ մինչ այդ ավելի էր իջեցրել գրության ժամանակի ներքևի շեմը՝ նշելով 420–430 թթ.¹¹, ինչը, փաստորեն, կնշանակի Աստվածաշնչի թարգմանությանը զուգահեռ: Նա Ազգաթանգեղոսի Պատմությունը համարում է Կորյունի և Եզնիկ Կողբացու կողմից արված թարգմանություն-խմբագրություն (կարծում է, որ այն նախապես եղել է հունարենով)՝ «Կորեան և Եզնիկայ երկասիրությունները բաղդատելով ընդ գրոցն Ազգաթանգեղայ, այլ ևս չէ կարելի տարակուսել, թե՛ երկաբանչիւրն իսկ են գլխաւոր գործիչներ ի խմբագրել և ի թարգմանել զայն ընդ ուղչութեամբ վարժապետին իւրեանց և մեծ սոփեստեսին Մեսրովբայ»¹²: Այսինքն՝ հստակ արձանագրելով բնագրական աղբյուրները՝ դրանք տեսնում է Ազգաթանգեղոսից Կորյուն ուղղությամբ: Բացատրությունն այսպիսին է. Կորյունը, մինչև Մաշտոցի վարքը հեղինակելը, նախ թարգմանել, խմբագրել է Ազգաթանգեղոսի Պատմությունը և իր իսկ կազմած բնորոշ դարձվածները, ստեղծած խոսքային պատկերներն

«V դարի կեսեր» (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1984, հ. 2, 449), երկրորդը՝ որ դրա «հեղինակն ապրել է V դարի առաջին կեսին» (Հայոց պատմություն. 2018, հ. 2, գիրք 1-ին, 533):

⁹ Աստվածաշնչի՝ ասորերենից կատարված առաջին թարգմանությունը ընդունված է թվագրել 407–409 թթ., հունարեն «ստույգ օրինակների» համեմատությամբ երկրորդ թարգմանությունը (կամ սրբագրումը)՝ 432–435 թթ. (տե՛ս Հայոց պատմություն. 2018, հ. 2, գիրք 1-ին, 511):

¹⁰ Ս ա Ր Գ ի ս ե ա ն. 1890, 319:

¹¹ Տե՛ս Ս ա Ր Գ ի ս ե ա ն. 1890, 6:

¹² Ս ա Ր Գ ի ս ե ա ն. 1890, 317:

օգտագործել է նաև Մաշտոցի վարքում՝ զուգահեռներ տեսնելով նրանց կերպարների ու գործերի մեջ. «Կորիւն է բանաքաղ յինքեան»¹³: Որպես թվագրման հիմք՝ Բ. Սարգիսյանը չի անդրադառնում վերոնշյալ 2-րդ և 3-րդ կետերին:

Նորայր Բյուզանդացին նույնպես Ագաթանգեղոսի Պատմությունը Կորյունի՝ հունարենից կատարած թարգմանությունն է համարում¹⁴:

Հակոբոս Տաշյանը Ագաթանգեղոսի Պատմության հիմքում հունարեն և ասորերեն աղբյուրներ է տեսնում, որոնք թարգմանվել, միմյանց կցվել-խմբագրվել, դրանց վրա հավելումներ են արվել V դ. կեսերին այդ լեզուներին տիրապետող հայ եկեղեցականի ձեռքով՝ առանց որոշակիացնելու այդ «եկեղեցականի» անձը: Ըստ այդմ՝ վերջին այս խմբագիրն է, որ բնորոշ դարձվածներ, պատկերներ է քաղել Կորյունի արդեն գրված ու իր ձեռքի տակ եղած գործից¹⁵:

Գալուստ Տեր-Մկրտչյանը Ագաթանգեղոսի Պատմության ոչ թե թարգմանիչ, այլ հեղինակ է համարում Կորյունին՝ ենթադրելով, որ նա այս գործը շարադրել է հենց հայերենով, իսկ «Վարք Մաշտոցի» հետ բնագրական նույնությունները «մի և նույն հեղինակի գրչի արտադրություններ են»¹⁶: Նա Ագաթանգեղոսի գրություն ժամանակը բարձրացնում է մինչև 464–465 թթ. և հետո¹⁷:

Նիկողայոս Մառը հիմք է ընդունում վերոնշյալ կետերից 3-րդը՝ «հունասերների» և «ասորասերների» ներեկեղեցական պայքարի փաստարկը. «առաջին ընդարձակ խմբագրությունը պատկանում է հելլենասեր մատենագիրներին ... Մեսրոպի և նրա գործակիցների շրջանին Սահակի գլխավորությամբ»¹⁸: Ըստ այդմ՝ ստացվում է, որ նա գործի ստեղծումը դնում է մինչև 439–440 թթ.:

Մանուկ Աբեղյանը Ագաթանգեղոսի Պատմության թվագրման հարցում հենվում է վերոհիշյալ հիմքերից 1-ինի և 3-րդի վրա միաժամանակ: Նա համարում է, որ բնագրական աղբյուրների հարցում առաջնայինը Կորյունն է, որի տեքստում համապատասխան հատվածներն իրենց տեղում են, մինչդեռ Ագաթանգեղոսի մոտ գրված են «անհարմար տեղերում»¹⁹: Իսկ երկի թվագրումը կատարում է իր այս դիտարկման և եկեղեցու ներսում «հունասերների» և «ասորասերների» պայքարի տրամաբանության հարթությունում. «Բայց որ V դարում ամբողջ եկեղեցիական-գրական շարժումը մեծ մասամբ հունասերների գործունեության արդյունք էր, և որ Մաշտոցն ու Սահակը իրենց աշակերտներով հունասերների պարագլուխներ էին, այդ հայտնի է: Պարզ է և այն, որ «Ագաթանգեղայ Պատմությունը» հունասերների գործն է, Մաշտոցի և Սահակի աշակերտներից մեկի, թերևս հենց Մաշտոցի և ավելի ևս Սահակի կարգադրությամբ առաջ եկած»²⁰: Իսկ դա ենթադրելի է նրանց կենդանության օրոք, այն է՝ դարձյալ մինչև 439–440 թվականը²¹:

¹³ Ս ա ռ գ ի ս ե ա ն. 1890, 109:

¹⁴ Բ ի լ գ ա ն դ ա ց ի. 1900, Ե:

¹⁵ Տ ա շ ե ա ն. 1891, 73–76, 86–87:

¹⁶ Տ է ը-Մ կ ը տ չ ե ա ն. 1896, 18:

¹⁷ Տ ե՛ս Տ է ը-Մ կ ը տ չ ե ա ն. 1896, 25:

¹⁸ M a p p. 1905, 157.

¹⁹ Ա բ ե ղ յ ա ն. 1968, հ. Գ, 181:

²⁰ Ա բ ե ղ յ ա ն. 1968, հ. Գ, 182:

²¹ Այս դեպքում, սակայն, ժամանակագրական մի անհարթություն է առաջանում, քանի որ Կորյունի գործը (որից քաղվածքներ պետք է անցած լինեին Ագաթանգեղոսին) թվագրվում է 443–451 թվականներով, ուրեմն դրանից չէր կարող քաղվածք լինել ավելի վաղ՝ մինչև 439–440 թթ. գրված բնագրում (տե՛ս Ա բ ե ղ յ ա ն. 1968, հ. Գ, 171):

Ստեփան Մալխասյանցը նույնպես Հայոց եկեղեցու ներսում «Հունասերների» և «ասորասերների» հակամարտությունն է համարում վճռորոշ գործոն ու թվագրման հիմք: Սակայն նկատի ունենալով, որ Կորյունը և Եղիշեն «չգիտեն» Գրիգոր Լուսավորչին (վերոնշյալ հիմք-փաստարկների 2-րդ կետ), նրան չեն հիշատակում անգամ ամենահարմար առիթների դեպքում²², Մալխասյանցը համարում է, որ Ագաթանգեղոսի Պատմությունը մտահղացվել և ստեղծվել է որպես «մի խոշոր հարված ասորական օրինատացիային և մյուս կողմից դրանով կապ է հաստատում Հայոց և Հունաց եկեղեցիների մեջ»: Այս հիմքերով էլ նա Ագաթանգեղոսի Պատմության կազմող-խմբագիր է ենթադրում «Հունասերներից» մեկին՝ Մաշտոցի կրտսեր աշակերտներից Գյուտ կաթողիկոսին. «Շատ հավանական է, որ հենց Գյուտ կաթողիկոսն է եղել Ագաթանգեղոսի անունը կրող Պատմության իրական հեղինակը»²³ գործը թվագրելով 461–465 թվականների միջակայքում²⁴: «Ասորասերներն» էլ, ըստ Մալխասյանցի, որպես դրա «հակակշիռ» թարգմանում են Լաբուբնայի Պատմությունը, դրանով չընդհանրում Աբգարի, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների պատմությունները՝ Հայոց եկեղեցու հիմքերը կապելով ավելի հին շրջանի, ասորական միջավայրի, առաքյալների, ընդհուպ Քրիստոսի հետ: Ինչ վերաբերում է այն հնարավոր հարցադրմանը, թե ինչու արդեն «Հունասերների» Գրիգորին որպես առաջին Լուսավորիչ հոչակած Հայոց եկեղեցին ընդունեց նաև նրանց հակառակորդ «ասորասերների» Հայաստանում քրիստոնեության մուտքի, սկզբնավորման, «լուսավորության» առաքելական այս տեսությունը, Մալխասյանցը դրա գիտական-տրամաբանական պատասխանի փոխարեն ժողովրդական խոսքով այսպիսի անակնկալ բացատրություն է տալիս. «ավելորդ թիքեն փոր չի ծակում»²⁵:

Ագաթանգեղոսի Պատմության անգլերեն թարգմանության ներածությունում խնդրին անդրադառնում է Ռոբերտ Թոմսոնը՝ համարելով, որ այս գործը կարող էր ստեղծվել 451 թ. Վարդանանց պատերազմից հետո, երբ Պարսից արքունիքը Հայաստանի նկատմամբ որոշակի հանդուրժողականություն էր ցուցաբերում կրոնական հարցերում²⁶: Իսկ գործի հիմնական նպատակն է՝ կերտել կաթողիկոսի իդեալական և օրինակելի կերպար ու դրանով իսկ ամրացնել Հայոց եկեղեցու հովվապետների հեղինակությունը ինչպես պարսկական, այնպես էլ բյուզանդական տիրապետության տակ ապրող բոլոր հայերի մեջ²⁷:

Նորագույն շրջանում Ագաթանգեղոսի Պատմության տարբեր հարցերի հիմնավորապես անդրադարձել է Ալբերտ Մուշեղյանը: Նա համարում է, որ այս

²² Մ ա լ խ ա ս յ ա ն ց. 1982, 12–13, 17:

²³ Մ ա լ խ ա ս յ ա ն ց. 1982, 17: Այս հիմնավորումները Մալխասյանցն ունի նաև Բուզանդի աշխարհաբար թարգմանության ներածության մեջ (Բ ու զ ա ն դ. 1968, 36–37):

²⁴ Կարեն Յուզբաշյանը և Պարույր Մուրադյանը նույնպես համարում են, որ Ագաթանգեղոսի գործն ստեղծվել է V դ. 60-ական թվականներին՝ «Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի կանոնացման կապակցությամբ» (Տե՛ս Մատենագիրք Հայոց. 2003, հ. Բ, 1291): Այսինքն, ըստ էության, հիմք են ընդունում Լուսավորչի անվան հիշատակված չլինելը Կորյունի և Եղիշեի երկերում: Նույն հիմքով նույն կարծիքին է նաև Արտաշես Մարտիրոսյանը (տե՛ս Մ ա Ր Մ Ի Ր Ո Ս Յ ա ն. 1982, 153):

²⁵ Մ ա լ խ ա ս յ ա ն ց. 1982, 19:

²⁶ Agathangelos. 1976, p. XC.

²⁷ Agathangelos. 1976, XCII.

գործը նախնական մի տարբերակով հունարեն գոյություն է ունեցել Տրդատ թագավորի ժամանակակից, նրա իրական քարտուղար Դավիթ Հռոմայեցու հեղինակությամբ²⁸ «Ազաթանգեղեայ Պատմութիւն. Վարք և Պատմութիւն սրբոյն Գրիգորի» վերնագրով: Սրա հիման վրա Սահակ Պարթև կաթողիկոսը ստեղծել է հայերեն տարբերակը. «Սահակ Պարթևն է Ազաթանգեղոսի Պատմության Ա և Գ գրքերի հեղինակը, որոնք միասին կազմում են Գրիգոր Լուսավորչի Վարքը և պետք է գրված լինեն 410-ական թվերին»²⁹ դեռ IV դ. ստեղծված Ս. Գրիգորի «Պատմութիւն Ազաթանգեղեայ» վերնագրով հունարեն Վարքի հիման վրա և ճոխացվել են հայկական միջավայրում սնված կենդանի ավանդություններով»³⁰: Այսինքն՝ ավելի է իջեցնում Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման թվականը: Իսկ Կորյունի հետ բնագրական աղբյուրները և նույնությոնները մեկնաբանում է Ազաթանգեղոսից անցած Կորյունին³¹:

Արամ Տեր-Ղևոնդյանի կարծիքով Ազաթանգեղոսի Պատմության հայերեն բնագրից հին թարգմանություններով մեզ հասած տարբերակները երկու խմբի են բաժանվում. մեկը հանդում է Ազաթանգեղոսի Պատմության կանոնական բնագրին, մյուսը (որ հայտնի դարձավ XX դ. սկզբից ի վեր մինչև 70-ական թվականները) առանձնանում է: Համարվում է, որ այս խմբի երկրորդ տարբերակները ծագում են ավելի վաղ՝ V դ. առաջին կեսում գոյություն ունեցած հայերեն մի խմբագրությունից, որ չի պահպանվել: Ամփոփելով այդ ամենը՝ Ա. Տեր-Ղևոնդյանը Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման հանգամանքների և ժամանակի հարցում գալիս է այսպիսի եզրահանգման. «Հինգերորդ դարի առաջին կեսում կազմվել է մի խմբագրություն, որի հայերենը դեռ հայտնի չէ, բայց կան նրանից ծագող ասորերեն, հունարեն և արաբերեն թարգմանություններ, որոնք Վարք են կոչվում: Այս հայերեն բնագիրը, ըստ երևույթին, դարերի ընթացքում մոռացության է տրվել: Հինգերորդ դարի կեսերին կազմավորվել է մեզ հայտնի խմբագրությունը, որը կանոնական է համարվել հայ եկեղեցու կողմից և ամբողջ միջնադարում օգտագործվել որպես նվիրական, սրբազան մատյան»³²: Այսինքն՝ եթե ոչ մեզ հասած «կանոնական» բնագիրը, ապա դրա մի հիմքի գոյություն հնարավոր է համարվում V դ. առաջին կեսում:

Անշուշտ, կարևոր են և պարտադիր բանասիրական, տեքստաբանական, պատմական հիմքերը գրական հուշարձանի գրության ժամանակի որոշման համար: Դրանք պետք է գործադրվեն և լիովին գործադրվել են նաև Ազաթանգեղոսի Պատմության դեպքում՝ արժեքավոր նյութեր և իրողություններ ի հայտ բերելով: Եվ, այդուամենայնիվ, փաստարկների ընդհանուր հայտարար-եզրահանգումը ստեղծման կամ գրության ժամանակի, նաև հեղինակ/հեղինակների հարցերում, ըստ էության, բացակայում է (թվագրման հարցում ունենք՝ IV դ. սկիզբ, 410-ական թվականներ, 420–430 թթ., «մինչև 439», V դ. առաջին կես, «V դ. կեսեր», «V դ. երկրորդ կես», 460–465 թ., իսկ հեղինակների հարցում՝ Մեսրոպ

²⁸ Մ ու չ ե ղ յ ա ն. 2012ա, 212:

²⁹ Այստեղ և այսուհետ բոլոր մեջբերումներում ընդգծումները մերն են:

³⁰ Մ ու չ ե ղ յ ա ն. 2012ա, 200:

³¹ Մ ու չ ե ղ յ ա ն. 2012ա, 204:

³² Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. 1983, 505–506:

Մաշտոց, Սահակ Պարթև, Կորյուն, Եզնիկ Կողբացի, Դավիթ Հռոմեացի, Գյուլտ կաթողիկոս)։

Թվագրման բանասիրական և պատմական հիմքերի անբավարարությունը

Վերադառնանք վերը հիշատակված այն երեք հիմքերին, որոնցով փորձ է արվել ճշգրտել Ազաթանգեղոսի Պատմության գրության ժամանակը։

Ա) Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատության հետ բնագրական աղերսները

Երկու երկերում բնորոշ բառերի, դարձվածների, նկարագրական, պատկերային, տեքստային հատվածների համընկնումները մեկնաբանվում են ինչպես Ազաթանգեղոսից Կորյուն (Բ. Սարգիսյան, Ա. Մուշեղյան), այնպես էլ հակառակ ուղղությամբ (Հ. Տաշյան, Գ. Տեր-Մկրտչյան, Մ. Աբեղյան, Ստ. Մալխասյան)։ Չնայած համապատասխան նյութն ամբողջությամբ մանրակրկիտ աշխատանքով բացահայտված ու ձեռքի տակ՝ այդ եզրահանգումներից մեկի լիակատար բացառման և մյուսի անվերապահ պնդման համար անվիճարկելի հիմքեր լինելու համաձայնություն փաստորեն չկա։ Այսինքն՝ այս գործի ստեղծման ժամանակի հարցում բանասիրական, տեքստաբանական նույն հիմքերը տարբեր գիտնականների բերել են տարբեր եզրահանգումների, ինչը նշանակում է, թե դրանք այս դեպքում թվագրման վճռորոշ կամ անվիճելի հիմք չեն կարող ծառայել։

Բ) Կորյունի և Եղիշի երկերում Գրիգոր Լուսավորչի անունը հիշատակելը Ուշադրության արժանի է և բացատրության կարիք ունի Ստ. Մալխասյանցի նշած այն փաստը, որ Կորյունը և Եղիշեն ընդհանրապես չեն հիշատակում Գրիգորին։ Ձեն հիշատակում անգամ իրենց պատմության այն դրվագներում, երբ նման հիշատակումը սպասելի է թվում։ Սակայն դժվար է այդ հիմքով միանշանակ համարել, թե նրանք «չեն ճանաչում Գրիգորին» և դա Ազաթանգեղոսի Պատմության թվագրման վճռական հիմք դարձնել։ Ավելին՝ Մալխասյանցը պնդում է նաև, որ Գրիգորը, ըստ էության, մոռացված է եղել ամբողջ 180 տարի մինչև Գյուլտ կաթողիկոսը³³։

Տրդատն ու Գրիգորն անվիճելիորեն Հայոց դարձն իրականացրած պատմական անձեր են, և անհնար է, որ ընդամենը մի հարյուր տարի հետո Հայոց եկեղեցու հիմնադրի՝ առաջին հովվապետի մասին հիշողությունը խամրած լիներ այնքան, որ նրա անունն անգամ չիմանային նույն եկեղեցու շրջանակներում գործող ամենագրագետ ու ամենատեղյակ մարդիկ կամ ենթարկվեին նրա անվան հիշատակման չինձու ինչ-որ արգելքի³⁴։

Հակադրվելով Ստ. Մալխասյանցին՝ այս խնդրին վերահիշյալ և մի այլ հոգվածով մասնավոր ու համակողմանի անդրադարձել է Ա. Մուշեղյանը³⁵։ Վաղուց հայտնի, V դ. սկզբներին գրված համարվող հուշարձանների հետ բնագրական քննությունը և այլ հիմնավորումներով նա եզրահանգում է, որ Գրիգոր

³³ Բ ու լ ա ն դ. 1968, 36–37։ Տե՛ս նաև՝ Մ ա լ խ ա ս յ ա ն ց. 1982, 12–13, 17։

³⁴ Չափազանցված է թվում Ա. Մուշեղյանի բացատրությունը, թե Գրիգորի անունը պատմիչները չեն հիշատակում, քանի որ 430-ական թվականներին Հայաստանում իշխող երկու ասորի կաթողիկոսներն արգելել են Գրիգորի պաշտամունքը (տե՛ս Մ ու լ - չ ե ղ յ ա ն. 2012ա, 201)։

³⁵ Մ ու լ չ ե ղ յ ա ն. 2012բ, 21–28։

Լուսավորչի պաշտամունքն առաջ է եկել դեռ IV դ. և V դ. առաջին տասնամյակներում ու արդեն իր բարձրակետի վրա էր³⁶: Սա բնական ու տրամաբանական է: Ինչ վերաբերում է Կորյունի և Եղիշեի երկերում Գրիգոր Լուսավորչի անունը չհիշատակելուն, տրվում է այսպիսի բացատրություն. երբ Սահակ Պարթևը հեռացվել էր կաթողիկոսությունից, Պարսից արքունիքի կողմից Հայոց եկեղեցու կաթողիկոսներ կարգված ասորի Բրքիշոն և Շամուելը «... ճգնում էին նսեմացնել Գրիգոր Լուսավորչի հեղինակությունը Հայաստանում: Հայոց ազգային սրբին նվաստացնելու նպատակով նրանք մի թուղթ հորինեցին և դրեցին իբրև ընծայական, քարոզների մի գրքի հայերեն թարգմանության սկզբում»³⁷: «430-ական թվերին Գր. Լուսավորչի անձը և անունը նսեմացնելու անհաջող փորձերից հետո, Հայ եկեղեցու ասորի կաթողիկոսները մեծտեղ բերեցին Հին Կտակարանի մի մոռացված ավանդություն, ըստ որի՝ Մովսես մարգարեի գերեզմանը Նաբավ լեռան վրա ծածկվել էր մարդկանց աչքից, որպեսզի անարժան կռապաշտ ժողովրդից չպաշտվի»³⁸: «... ասորի կղերը Հայաստանում հատուկ արշավ էր սկսել Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը վերացնելու նպատակով»³⁹: Նա դա համարում է «խորհրդապաշտական» արգելք, որը, ըստ հետազոտողի, արգելել է Ագաթանգեղոսի Պատմությունը և Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը. «... քանի դեռ աստվածային տեսիլքով չեն հայտնվել Գրիգոր Լուսավորչի նշխարները, պետք է դադարեցնել նրա պաշտամունքը և արգելել նրան փառաբանող Ագաթանգեղոսի Պատմությունը»⁴⁰: Բյուզանդական Զենոն կայսեր 1-ին տարում (474 թ.) Լուսավորչի նշխարների հայտնաբերումից հետո, ահա, Գրիգորի անվան հիշատակումը և Ագաթանգեղոսի Պատմությունը կրկին լեգալացվեցին⁴⁰:

Ա. Մուշեղյանի կատարած մանրակրկիտ աշխատանքի այս արդյունքը, սակայն, հարցեր է առաջացնում.

— եթե այդ «խորհրդապաշտական արգելքը» սահմանվել է Գրիգորին զուգահեռելով և հավասարեցնելով աստվածաշնչային Մովսեսին, դա «նսեմացում» է, թե՞ պատիվ⁴¹:

³⁶ Գնահատելով Ա. Մուշեղյանի կատարած մանրակրկիտ և օգտակար աշխատանքը՝ դժվար է, իհարկե, համաձայնել Ստ. Մալխասյանցի մասին ասված այն մտքին, թե «... մեր կորովի հայազետը և նրան հետևողները բոլորովին ծանոթ չեն եղել դարասկզբին գոյություն ունեցած Հայ եկեղեցական վավերագրերին, որոնք հիմնովին հերքում են նման կանխակալ պատկերացումները» (Մ ու շ ե ղ յ ա ն. 2012թ., 21), երբ խոսքը վերաբերում է նաև վաղուց հրապարակված բնագրերի:

³⁷ Մ ու շ ե ղ յ ա ն. 2012թ., 28:

³⁸ Մ ու շ ե ղ յ ա ն. 2012թ., 35:

³⁹ Մ ու շ ե ղ յ ա ն. 2012թ., 30:

⁴⁰ Մ ու շ ե ղ յ ա ն. 2012թ., 41–42: Ագաթանգեղոսի ձեռագրերից երկուսն է նման տեղեկություն պարունակում (տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. 1909, 73): Ըստ Խորենացու՝ նշխարները հայտնաբերել է Գառնիկ անունով մի ճգնավոր Գրիգորի մահվանից «չատ ժամանակ հետո» (Մ ո վ ս է ս Խ ո ռ ե ն ա ջ ի. 1991, 244): Պատմահայրն այս դեպքում չէր կարող նկատի ունենալ Զենոն կայսեր շրջանը, քանի որ նրա Պատմության մեջ 440 թվականից հետո որևէ դեպքի մասին ակնարկ չկա:

⁴¹ Խորենացին դա համարում է պատիվ. «Եվ ծածկեալ ամս բազումս աստուածային իմն գողցես տեսչութեամբ, իբրև զՄովսէսն զայն ի Հնումն, զի մի՛ ի պաշտօն

– եթե ասորի այս կաթողիկոսներն իրենց իշխանությունն 4–5 տարիներին չարամտորեն կարող էին Հայոց եկեղեցու հիմնադիր, արդեն վաղուց պաշտամունքի առարկա Գրիգոր Լուսավորչին «նսեմացնելուն», «նվաստացնելուն», «վարկաբեկելուն», «նրա պաշտամունքը վերացնելուն» ուղղված նման արգելք սահմանել (ինչի միտումն ու վնասը, բնականաբար, չէին կարող չհասկանալ ժամանակի Հայ եկեղեցականները), ապա ի՞նչն էր խանգարում Հայոց եկեղեցուն նրանցից հետո հանել այդ «թուղթուգիր» արգելքը՝ թեկուզ Սահակ կաթողիկոսի՝ այլ բովանդակությամբ «Տեսիլ» և Լուսավորչի նշխարներն ավելի շուտ հայտնաբերող մի «Գառնիկ» ունենալով (չէ՞ որ այդ ամենը լեզենդ էր, որ կարելի էր ստեղծել կամ փոփոխել ցանկացած պահի)⁴²:

– Ագաթանգեղոսի Պատմությունը, ի դեմս իր խիստ ներգործուն ու դաստիարակիչ կերպարների, ստեղծվել էր դեռ միայն մակերեսորեն տարածված քրիստոնեության արմատավորման, ամրապնդման ու ջերմեռանդ հավատի վերածելու, դրանով իսկ եկեղեցու վտանգված իշխանության պահպանման հրատապ ու կենսական դարձած քաղաքական խնդիրը լուծելու համար, խնդիր, որը 430–440-ական թվականներին և հետո ամենևին չէր կորցրել իր հրատապությունը: Ինչպե՞ս կարող էր Հայոց եկեղեցին այդքան հեշտությամբ տասնամյակներով հրաժարվել նման մի աշխատող «գործիքից»:

Այսինքն՝ Ստ. Մալխասյանցի եթե ոչ եզրահանգումը (Ագաթանգեղոսի գործի ստեղծման ժամանակը ճշտելու մասին), ապա հարցադրումը (Կորյունի և Նղիշի երկերում Գրիգոր Լուսավորչի անունը չհիշատակելու մասին) շարունակում է օրինակարգ մնալ: Չհավակնելով տալ դրա սպառիչ պատասխանը՝ կարելի է մի դիտարկում անել՝ նմանատիպ գուգահեռի վրա:

Որպես Ագաթանգեղոսի Պատմության թվագրման ժամանակի վերին եզրի հիմք Ստ. Մալխասյանցը մատնանշում է նաև, որ Ագաթանգեղոսի մոտ էլ չեն հիշատակվում Հայաստան եկած առաքյալները (Թադեոս և Բարդուղիմեոս): Նա կարծում է, թե դա էլ պայմանավորված է այն բանով, որ վերջիններս մասին առաջին գրավոր պատմությունը (Լաբուբնա) վերածվել է Հայերենի Ագաթանգեղոսի Պատմությունից հետո, ուստի և այն ծանոթ չի եղել դրա հեղինակին: Բուզանդը, իր երկը արդեն դրանից հետո գրած լինելով, այդ թարգմանության միջոցով ծանոթ է եղել առաքյալների մասին պատմություններին և հիշատակել է նրանց⁴³: Սակայն առաքյալներին չեն հիշատակում ոչ միայն Ագաթանգեղոսը, Կորյունը, Նղիշեն, այլ նաև՝ Փարպեցին: Վերջինս, ըստ Մալխասյանցի կազմած ժամանակագրության⁴⁴, Լաբուբնայից ու Փավստոսից էլ հետո է գրել իր գործը (490-ական թվականներ) և նույնպես քաջածանոթ պետք է լիներ առաքյալների մասին արդեն հայերենով շրջանառված պատմությանը, եթե դա պետք է լիներ ճանաչման հիմքը: Առաքյալներին հիշատակելը, նույնպես

ի դեռահավատ բարբարոսացս առցի ազգաց» (Մ ո վ ս է ս ի ն ո բ ե ն ա ց ի. 1991, 244):

⁴² Այս հարցում ընդունված տեսակետն ըստ բնագավառային հանրագիտարանի հետևյալն է՝ Գրիգորի նշխարները հայտնաբերվել և թորդանում ամփոփվել են նույն IV դարում՝ նրա որդի Վրթանես Ա կաթողիկոսի օրոք (տե՛ս Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան. 2002, 226):

⁴³ Տե՛ս Մ ա լ խ ա ս յ ա ն ց. 1982, 18–20:

⁴⁴ Տե՛ս Մ ա լ խ ա ս յ ա ն ց. 1982, 32–33:

բացատրություն կարիք ունենալով, չի կարող վճռական հիմք լինել պնդելու, թե հիշյալ հեղինակները նրանց «չեն ճանաչել»։ Մի կողմ թողնելով թվագրման հիմքը կամ հանգամանքը՝ բացատրությունը կարող է լինել հետևյալը. առաքյալները Հայաստանի ներսում որպես «հեղինակություններ», քրիստոնեության տարածման քարոզչության կամ ամրապնդման առաջնային գործում էական «գործառութային դեր» չէին կարող ունենալ առաջին այդ շրջանում։ Նրանք՝ որպես «քաղաքական փաստարկ», պետք էին ավելի ուշ, հատկապես արտաքին աշխարհի դեմ որպես Հայոց եկեղեցու առաքելական կարգավիճակի հիմք, երբ վերջինիս համար ուրվագծվեց կամ ծագեց անկախ, ինքնագլուխ լինելու, այլ աթոռների (մասնավորաբար՝ Բյուզանդական) նկատմամբ ենթակա վիճակում չհայտնվելու խնդիրը։ Նույն կերպ, թերևս, գուցե «գործառութային» առումով, Գրիգորի անվան հիշատակումը ինչպես Կորյունի, այնպես էլ Եղիշեի երկերում որևէ էական բան չէր կարող տալ՝ նկատի ունենալով երկուսի գործերի էլ հետապնդած խիստ հստակ ու նեղ գործնական-քաղաքական նպատակը։ Կորյունի դեպքում միակ խնդիրն էր Հայոց գրերի ստեղծման գերկարևորությունը և սրբության հանգամանքը ցուցադրելը (որ, բնականաբար, պիտի շաղկապվեր ու հիմնավորվեր Մաշտոցի կենսագրությամբ)։ Եվ ճիշտ է նկատված, որ, ըստ էության, որպես սկզբունք, նա հետևողականորեն խուսափում էր իր «թեմայից» դուրս «ընդհանուր բնույթի պատմական փաստեր հաղորդելուց»⁴⁵։ Եղիշեի դեպքում նպատակը զրադաշտականության ընդունման պարտադրանքի դեմ հանուն հավատի նահատակվելու, մարտիրոսանալու անխախտ պատրաստակամությամբ անմնացորդ պայքարողների կերպարի կերտումն է։ Նույն կերպ՝ Եղիշեն չի հիշատակում նաև Սահակ կաթողիկոսին և Մեսրոպ Մաշտոցին (որոնց, ամենայն հավանականությամբ, նաև աշակերտել է), ինչը, բնականաբար, չի կարող նշանակել, թե նրանց չի ճանաչել կամ գնահատել։ Նրանց անունների հիշատակման համար էլ հարմար տեղեր կարելի էր գտնել, և այդ հիշատակումը (մեր տեսանկյունով) կարող էր պատշաճ դիտվել։ Բայց պատմիչն առաջնորդվել է ոչ թե մեր և այսօրվա, այլ իր ու իր ժամանակի խնդրի տեսանկյունով ու պատկերացումներով։ Տրդատի անունն էլ Եղիշեն տալիս է միայն մեկ անգամ՝ ռազմական օգնության խնդրանքով Բյուզանդիայի կայսրին ուղղված նամակում⁴⁶, որտեղ այն, իրոք, կարևոր «գործառութային» դեր ունի. չլինեք այդ նամակը կազմելու կարիքը, չէր հիշատակվի նաև Տրդատը։ Եվ դա չէր կարող մեկնաբանվել որպես Տրդատին չճանաչելու, չգնահատելու փաստ։

Այսինքն՝ խնդիրն այս՝ գործնական-քաղաքական դիտանկյունից քննելու դեպքում, ինչպես Ագաթանգեղոսի, Կորյունի, Եղիշեի, Փարպեցու երկերում առաքյալներին չհիշատակելը, այնպես էլ Կորյունի, Եղիշեի մոտ Գրիգոր Լուսավորչին չհիշելը չի կարող նրանց չճանաչելու հանգամանք դիտվել և պատմագրական հուշարձանի թվագրման համար վճռական կամ առաջնային հիմք ծառայել։

Գ) «Հունասերների» և «ասորասերների» ներեկեղեցական պայքարը

Ինչպես տեսանք, նման մի հակադրություն կամ պայքար, որպես Ագաթանգեղոսի Պատմության թվագրման հիմք, չեղյալ էր հատկապես Սուրբ Մալխասյանցի և Մ. Աբեղյանի (նաև Ն. Մառի) ուսումնասիրություններում։ Չկապելով որևէ հուշարձանի թվագրման խնդրի հետ՝ «Հունասեր» և «ասորասեր»

⁴⁵ Տ է ր-Մ ո վ ս ի ս ե ա ն. 2018, 26:

⁴⁶ Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. 1957, 71:

կուսակցությունների պայքարի մասին է խոսում նաև Մեսրոպ Տեր-Մովսիսյանը. «Հայաստանում Դ. և Ե. հարյուրամյակներում կային երկու հակադիր կուսակցություններ. ասորական ազդեցության, ասորական գրականության կողմնակիցներ, և հունասեր ուղղության կողմնակիցներ»⁴⁷: Լևոն Տեր-Պետրոսյանը մի առիթով անդրադառնում է V դ. համար ենթադրյալ այդ պայքարին. «Ե. Տեր-Մինասյանը մեծ կարևորություն է տալիս հատկապես ասորական և հունական կուսակցությունների պայքարին, այն համարելով «Հայոց եկեղեցու Դ և Ե դարերի պատմության հական նիւթը»: Պետք է նշել սակայն, որ այս հարցում արժանահիշատակ հեղինակը մի շարք այլ հետազոտողների նման ընկել է որոշ չափազանցության մեջ»⁴⁸: Իսկ մի այլ տեղ նա ոչ թե ներեկեղեցական պայքարի, այլ գրական հարթության վրա անգամ մրցակցություն չի տեսնում. «Պատմագիրների կողմից հավաստված այն փաստը, որ միևնույն հեղինակները՝ Սահակ Պարթևը, Եզնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին և ուրիշներ, թարգմանություններ են կատարել եւ հունարենից, եւ ասորերենից, ավելորդ է դարձնում նման հարցադրումը»⁴⁹:

Հատկանշական է, որ ամբողջ V դ. համար որպես առանցքային երևույթ համարելով եկեղեցու ներսում «հունասերների» և «ասորասերների» պայքարը՝ երկու մեծանուն գիտնականներ՝ Մ. Աբեղյանը և Ստ. Մալխասյանցը, սակայն, նույն այդ հիմքի վրա գալիս են խիստ տարբեր հետևությունների, ինչը ինքնին նշանակում է, թե «հունասերներ» – «ասորասերներ» պայքարը (եթե նման երևույթ ընդհանրապես եղել է) նույնպես ելակետ չի կարող լինել ինչպես Ագաթանգեղոսի երկի հեղինակ-խմբագրողների որոշման, այնպես էլ թվագրման հարցերում:

Հայոց եկեղեցին վաղուց արդեն վերից վար ձևավորված նվիրապետությանը կազմակերպված մի ինքնուրույն իշխանական կառույց էր՝ հսկայական տիրույթներով և հարստությամբ, սեփական շահերի հստակ գիտակցմամբ ու հավակնություններով: Ներեկեղեցական պայքարը (դիրքի, իշխանության համար) որևէ հիմքով կարող էր առաջին պլան գալ միայն այն բանից հետո, երբ վերացված կամ նվազած կլինեին Հայոց եկեղեցու՝ որպես ամբողջական կառույցի իշխանությունը սպառնացող արտաքին և հատկապես ներքին վտանգները: Իսկ այդ վտանգները չեզոքացված կարող էին համարվել միայն քրիստոնեության լիակատար ու վերջնական տարածված, արմատավորված, ազգային ինքնություն առաջին հատկանիշ լինելուց հետո: Ըստ այդմ «ասորասերների» և «հունասերների» ներեկեղեցական պայքար V դարում չէր կարող առաջնային լինել ընդհուպ բարձրանալով կարևորագույն գրական հուշարձանների ստեղծման շարժառիթ դառնալու մակարդակի: Հայոց եկեղեցին պարզապես չէր կարող իրեն նման վտանգավոր «չքեղություն» թույլ տալ: Պատմագրական երկերը, թարգմանական և ինքնուրույն այլ ժանրերի մատենագրական գործերի հետ լծակից, Հայ եկեղեցու իշխանության օբյեկտ ժողովրդի միասնության և անխաթարության պահպանման խնդիրն էին լուծում պայքարի առաջնագծում: Դա կարևոր էր, մանավանդ, Հայաստանի երկու մասի բաժանվելուց և թագավորական իշխանության սասանումից հետո, երբ ինչպես Հայաստանի գահակալի, այնպես էլ եկեղեցու ղեկավարի հարցն արդեն, ըստ էության, որոշվում էր Տիգրանում:

⁴⁷ Տ է ր-Մ ո վ ս ի ս ե ա ն. 2018, 39–40:

⁴⁸ Տ է ր-Պ ե տ ր ո ս յ ա ն. 1980, 66:

⁴⁹ Տ է ր-Պ ե տ ր ո ս յ ա ն. 1984, 10:

Եթե անգամ Հայ եկեղեցու ներսում եղել են հունական կամ ասորական «կողմնորոշման» նախասիրություններ, ապա դրանք խիստ լուսանցային նշանակություն պիտի ունենային երկրի և եկեղեցու հիմնական քաղաքական օրակարգի համեմատությամբ, որը եկեղեցու իշխանության պահպանման հիմքի, դրա լինել-չլինելու ընդհանրական, համազգային կշիռ ու տարողություն ուներ: Երբ վտանգված է ամբողջը, դրա ենթադրյալ մասերը՝ «ասորասերները» և «հունասերները», բնականաբար, պայքարը պետք է ծավալեին ոչ թե միմյանց, այլ այդ ընդհանուր վտանգի դեմ: Եվ քաղաքական այդ խնդրի լուծմանն էր ուղղված ու հենց այդ խնդիրը լուծեց գրեթե ստեղծամաժը սկիզբ առած այն հեղափոխությունը, որի նյութական առարկայացումը մշակութային հետևանքների տեսքով մեզ է հասել որպես Հայկական «Ոսկեդար»: Այսինքն պատմագրական այդ հուշարձաններից յուրաքանչյուրի հետ կապված հարցերը պետք է դիտարկել ոչ թե «հունասերների» և «ասորասերների» ներքին պայքարի, այլ հենց ժամանակի այդ հիմնական քաղաքական օրակարգի հիմքի վրա՝ որպես այն սպասարկող միավորներ: Նույն հիմքի վրա պետք է դիտարկել նաև մատենագրական նույն հուշարձաններում ժամանակի հետ մասնակի փոփոխություններ կրող, նաև ըստ անհրաժեշտության խմբագրվող այդ օրակարգի թելադրանքով հնարավոր փոփոխությունները:

Եվ վերջապես, որ շատ ավելի կարևոր է, ինչպես կողմնորոշումների՝ «հունասերների» և «ասորասերների», այնպես էլ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի կանոնականացման ենթադրյալ հիմքերով բացատրությունները նեղացնում, փոքրացնում են Ազգաթանգեղոսի Պատմության ստեղծման իրական շարժառիթը, դրանով իսկ ժամանակին այս գործին տրված նշանակությունը ու դրա խաղացած պատմական դերը: Այն պետք է դիտարկել ժամանակի այն կենսական ու հրատապ դարձած առաջնային քաղաքական խնդրի հարթության վրա, որ իրենց չափով արձանագրում են պատմիչները, և որի լուծմանն էր ուղղված գրեթե գլուխից ու Աստվածաշնչի թարգմանությունից սկսած ողջ թարգմանական և ինքնուրույն մատենագրությունը: Պարզապես, այդ խնդիրը պատմիչները չէին կարող ավելի հստակ ձևակերպել՝ որպես եկեղեցու իշխանության ամրապնդման և պահպանման գույտ քաղաքական հարց՝ քրիստոնեության տարածման լիակատարության, արմատավորման, ընդհուպ՝ մոլեռանդության աստիճանի բարձրացման միջոցով⁵⁰: Սա բացասական գնահատական չէ, այլ

⁵⁰ Այդպես են ներկայացնում Եղիշեն և Փարպեցին «ուխտապահ» նախարարներին ու նրանց գործը, որ գնում էին պատերազմի ավելի հաճախ նահատակվելու տենչանքով, քան հաղթելու վճռականությամբ: Անշուշտ, սա չէր կարող համապատասխանել իրականությանը և այլ բան չէ, քան եկեղեցու իշխանության պահպանման նպատակին միտված՝ հավատացյալ/հայրենասերի օրինակելի կերպարի կերտում: Նիկողայոս Ադոնցն իրավացիորեն կասկածի տակ է առնում այդ պատերազմների շարժառիթն անգամ. «Այս տեսքով են պատմիչները մեզ ներկայացնում Հայերի ապստամբությունը 5-րդ դարում, ընդ որում՝ նրանք, որպես հոգևոր կոչման և դաստիարակության տեր անձինք, ջանում են ամբողջ պատմությանը հաղորդել կրոնական բնույթ» (Ա. դ. ո. ց. 2007, 5–7): Կարելի է ասել, որ հիշյալ պատմիչները պարզապես հետևել են եկեղեցու հրահանգած «քաղաքական գծին»: Թագավորական կամ պետական հովանոցից զրկված հոգևոր կառույցի անխաթարությունը և իշխանությունը պահելու համար դա պարտադրված ու արդարացված միջոց էր:

Հենց այս վերջին հիմքով են Ն. Մառի բացատրություններն իր հրատարակած արաբերեն մի թարգմանություն-խմբագրության առիթով. «Եթե Ազաթանգեղոսը նյութերն ընտրել է ըստ իր առջև դրած խնդիրների ... մեր խմբագրության հեղինակը, անկասկած, նույն սյուժեների վրա աշխատել է ի շահ իր հետապնդած խնդիրների»⁵³: Ըստ էության, նույն ելակետային հիմնադրույթն է արձանագրում Մ. վան Էսթրոկը ասորական թարգմանության համար. «Ավանդություններն առանձին քերթողների գրական երևակայության կամ ստեղծագործական մտքի շնորհիվ չէ, որ վերափոխվում են: Նրանք սովորաբար հասարակական արժատներ ունեն և ծառայում են պատմական որոշակի նպատակի: Եվ իսկապես, Ազաթանգեղոսի ազգային ավանդության դեպքում խմբագրությունների գանազանությունը համապատասխանում է կրոնական և քաղաքական նորանոր իրադրությունների հարմարեցման պահանջին»⁵⁴:

Նույն մոտեցումը, հասկանալիորեն ավելի մեծ չափով, պետք է վերաբերի նաև Ազաթանգեղոսի բուն գործին:

Թվագրման խնդրից դուրս՝ այլ հիմքերով պատմագրական հուշարձանի ուսումնասիրման կարևորությունը

Որպես պատմական սկզբնաղբյուր, ստույգ պատմության վերականգնման միջոց՝ գերկարևոր է պատմագրական երկի գրության կամ ստեղծման ժամանակի ճշգրտումը: Երբ դա հայտնի չէ կամ վիճարկելի է, ինչպես ասացինք, առաջնահերթ և օգտակար են տեքստաբանական, բանասիրական, պատմական-աղբյուրագիտական բնույթի ուսումնասիրություններով ներկայացող փաստարկները, որոշ դեպքերում, գուցե՝ բավարար: Սակայն, ինչպես տեսանք, նույն մոտեցումը և նույն նյութը տարբեր գիտնականների տարբեր եզրահանգումների կարող է բերել գործի ստեղծման կամ գրության ժամանակի, հեղինակ/հեղինակների և այլ հարցերում: Նման դեպքերում ճիշտ կլինի մի կողմ դնել պատմագրական երկի ստեղծման ժամանակագրական մեկնակետը, չկաշկանդվել դրանով: Ամեն մի պատմագրական ստեղծագործություն ունի նաև այլ հատկանիշներ, որակներ, առանձնահատկություններ, խնդիրներ, որոնք կարող են բացահայտվել այլ հիմքով ու դիտանկյունով քննությամբ: Այդպիսի ուսումնասիրությունների արդյունքները, ինքնին կարևոր լինելով, կարող են կողմնակի թվացող, սակայն ոչ պակաս փստահելի հիմք դառնալ նաև հուշարձանի ժամանակի խնդիրը լուծելու համար կամ օժանդակել թվագրման գոյություն ունեցող վարկածներից որևէ մեկին:

Մի փոքր շեղվելով որպես օրինակ բերենք Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Ժամանակին (XIX դ. վերջերից) բնագրական, բանասիրական, պատմական փաստարկների անվիճելի թվացող հիմքերի վրա V դարից «վերաբնակեցրել են» հետագա դարերում: Ընդ որում՝ եթե անգամ նույնն են եղել ժամանակի վերանայման հետադոտողների փաստարկները, ապա այս դեպքում էլ տարբեր են եղել ժամանակի խնդրի վերանայման նրանց եզրահանգումները, և դա՝ շուրջ երեք դարի կտրվածքով. նրան «վերաբնակեցրել են» ոմանք՝ VII, ոմանք՝ VIII, անգամ IX դարերում: Մինչդեռ, որպես պատմական սկզբնաղբյուր, մի բան է, երբ Խորենացու Պատմությունը դիտարկվում է V դ. վերջին տասնամյակներում ստեղծված գործ (ինչպես ինքն է ներկայացնում), մի այլ բան՝ երբ

⁵³ М а р р. 1905, 180.

⁵⁴ Տե՛ս Տ ե Ր-Պ ե տ Ր ո ս յ ա ն. 2019, 79–80:

այն դիտարկվում է հաջորդ դարերից որևէ մեկում: Այս դեպքում Պատմահայրն ընդհուպ որակվել է «սուտ», «ստախոս», «խաբեբա» և այլն, այսինքն՝ ըստ էության, անհավաստիության, խոտանման խարան է դրվել նրա Պատմության վրա՝ որպես սկզբնաղբյուրի:

Ժամանակի խնդիրը մի կողմ դնելով՝ ինքնացու Պատմությունն այլ դիտանկյուններով ուսումնասիրելը, մասնավորապես դրա աշխատանքի յուրահատկությունները պարզելը, համակարգային կառուցվածքը վեր հանելը, հնագիտական նյութի հետ համեմատելը, պատմական տեղեկությունների արժանահավաստությունն ստուգելը, ինչպես նաև մտածողության առանձնահատկությունների, կրոնական ազդեցության աստիճանի, դավանած արժեքային համակարգի ու նմանօրինակ այլ խնդիրների հարուցումը և ուսումնասիրումը տվել են անվիճելի արդյունքներ: Ինքնին կարևոր լինելով հանդերձ՝ դրանք նաև որպես «կողմնակի հետևանք» անհնար են դարձնում ինքնացուն V դարից տեղաշարժելը: Անհնար կլինեն, օրինակ, VIII–IX դդ. թվագրումը հիմք ընդունելով, խնդիր դնել քննելու նրա ներկայացրած նյութը հեղինակական դարաշրջանին հատուկ երևույթների համապատկերում⁵⁵, գնահատել նրա վերաբերմունքը հեթանոսության նկատմամբ, հասնել ինքնացու ժամանակի որոշման համար այդքան քննված, չարչրկված «Ողբի» նորովի իմաստավորմանը⁵⁶, պարզել նրա Պատմության համակարգերն ու համակարգվածության բարձր աստիճանը և այլն: Ահա, ինքնացու Պատմության հմուտ ուսումնասիրող Գագիկ Սարգսյանի այլոց և իր այդօրինակ հետազոտությունների արդյունքների հիման վրա արված եզրահանգում-արձանագրումը. «Իր ազատամտությամբ, Աստվածաշնչի տեքստի, ներառյալ՝ Նոր Կտակարանը, կույր ֆետիշացման բացակայությամբ, հեթանոսական հեղինակներին ազատորեն դիմելու հանգամանքով, պատմական իրադարձությունները և երևույթները բացատրելիս աստվածային նախախնամության գործոնի գրեթե լրիվ բացառմամբ, հոգևորականության սուր քննադատությամբ, պատմության և կյանքի հարցերին բանական մոտեցմամբ, հեղինակական դարաշրջանի (Հայաստանում այն որպես հեղինակական շարունակվեց և մեր թվականության առաջին դարերում) ռացիոնալիստական ոգով առասպելների և զրույցների մեկնաբանմամբ, Մովսես ինքնացուն ուղղակի անհարիր է VII–IX դարերի պատմա-մշակութային միջավայրին»⁵⁷: Եվ, ակնհայտորեն, սա պետք է լինի առաջնայինը:

Պատմիչի մտածողության, պատմագիտական ընկալումների, աշխարհայացքի, աշխատանքի յուրահատկությունների թվարկված այս հատկանիշներից և իրողություններից որևէ մեկը չի կարող հետագա գրիչ-խմբագիրների միջամտության, լրացման արդյունք լինել: Մինչդեռ այդպիսին կարող են լինել ինքնացուն V դարից տեղաշարժող մինչ այժմ արձանագրված ու շրջանառության մեջ դրված բոլոր տեքստային ու պատմական-աղբյուրագիտական «հիմքերը», անկախ այն բանից՝ որքանով են դրանց՝ որպես ընդմիջարկության հիմնավորմանն օգնում մեզ հասած ձեռագրական տարրնթերցումները կամ այլ նյութեր. այդպիսիք կարող են նաև մեզ հասած չլինել, չգտնվել:

⁵⁵ Նկատի ունենք Գ. Սարգսյանի՝ հեղինակական դարաշրջանի հետ Մովսես ինքնացու քաջամանությունը ցուցադրող արժեքավոր մեկնադրությունը (Ս ա Ր Գ ս Յ ա ն. 1966):

⁵⁶ Ս ա Ր Գ ս Յ ա ն. 1997, 119–130:

⁵⁷ Ս ա Ր Գ ս Յ ա ն. 2006, 26:

Պատմիչների բնագրերում տարրնթերցումների մեծագույն մասն անուշադրություն, մայր օրինակը ոչ ճիշտ կարդալու, ոչ ճիշտ հասկանալու հետևանք է: Սակայն կան նաև գիտակցված «ուղղումների», «շտկումների», «լրացումների» դեպքեր: Նման միջամտություններ արգելվել են, թերևս, միայն կանոնական տեքստերի դեպքում: Ոչ կանոնական տեքստերի (ինչպիսիք են նաև պատմագրական գործերը) նկատմամբ, եթե անգամ չի խրախուսվել, սակայն գրիչ-խմբագիրներն իրենց թույլ են տվել նման ազատություն ու դա կարող էին անել մտածված ու նպատակադիր՝ թելադրված իրենց իմացությունների, ճաշակի, այս կամ այն տեղեկատվության ամբողջացման ու լրացման, արդիականացման անշահախնդիր, «օգտակար» գործ արած լինելու մղումով, գուցե նաև իրենց ժամանակի՝ կարևոր համարած ինչ-որ խնդրի, ինչ-որ մեկի պատվերի թելադրանքով⁵⁸: Այսինքն՝ հարափոփոխ պատմությունը և իրադարձություններով թելադրված կամ հետագա գրիչ-խմբագիրների «ստեղծագործական» ճաշակով պայմանավորված՝ պատմագրական երկերը «խոցելի» են դարձել զանազան միջամտությունների հանդեպ:

Ինչպես Խորենացու, այնպես էլ Ազաթանգեղոսի դեպքում, ժամանակի խնդիրը որպես գայթակղության քար կամ յուրատեսակ մի «լուծմոտիվ» մեծապես նպաստել է տվյալ գործերի լեզվական, բանասիրական, գրական, պատմական-աղբյուրագիտական, տեքստաբանական և այլ հարթությունների վրա համապարփակ ուսումնասիրմանը: Մինչդեռ նույն այդ հիմքերով, այնուամենայնիվ, վիճելի մնացած ժամանակի խնդիրը որպես ելակետ ընդունելը կարող է արգելակող հանգամանք դառնալ նույնքան կարևոր այլ դիտանկյուններով պատմագրական երկի քննության, իմաստավորման, որպես պատմական սկզբնաղբյուր ուսումնասիրման կարևոր այլ հարցադրումների առաջադրման և լուծման համար: Գրիչ-խմբագիրների «անարվեստ» արված միջամտությունները ձեռագրական, քերականական կամ այլ հիմքերով երբեմն հնարավոր է լինում տեսնել և արձանագրել: Առավել հմուտ ու գրագետ գրիչ-խմբագիրները դրանք կարող էին օրգանապես այնպես ձուլել հիմնական տեքստին, որ դժվար նկատելի ու անապացուցելի լինեին այսօր: Այսինքն՝ մնում է այլ հիմքերով բացատրություններ գտնել ժամանակագրական տեղաշարժերի համար բերված վերոհիշյալ բնագրական, բանասիրական, պատմական-աղբյուրագիտական բնույթի «ակնհայտ» թվացող փաստարկների համար⁵⁹: Իսկ նման հիմքեր, ինչպես

⁵⁸ Այսինքն՝ ինչ-որ տեղ դրանց վերաբերվել են մոտավորապես այնպես, ինչպես այսօր մասնագետները՝ «Վիքիպեդիա» առցանց ազատ հանրագիտարանին: Գրիչ-խմբագիրների նման «ակտիվ» միջամտությունների՝ շարժառիթների ու հնարավորության մասին ընդարձակ մի թվարկում տե՛ս նաև՝ Մ ա լ խ ա ս յ ա ն ց. 1940, 114–115:

⁵⁹ Խորենացուն V դարից տեղափոխող «փաստարկների» մի մասը հնագիտական, ազգագրական, լեզվաբանական, աղբյուրագիտական և այլ նյութերով արդեն իսկ հերքվել են (տե՛ս Մ ա Ր գ ս յ ա ն. 2006, 24–25): Մի մասը հետագա ընդմիջարկություններ են հայտարարվել, սակայն առանց դրանց համար վկայակոչված տեքստային փաստարկների: Դրանցից մեկը Խորենացու Պատմության մեջ «Չորրորդ Հայքի» հիշատակումն է (վարչական անվանում, որ ծնվել է VII դարում), և այն էլ՝ մի քանի տեղերում: Մեր նախորդ հոդվածներից մեկում, որ վերաբերում է բոլորովին այլ՝ նախարարական իշխանության օրինակարգության հարցի քննությանը, «կողմնակի» մի արդյունք ստացվեց, վստահելի հիմք՝ «Չորրորդ Հայքի» այդ հիշատակումներից

ցույց է տալիս խորենացու օրինակը, կարող են գոյություն ունենալ, ի հայտ գալ հենց թվագրումներից որևէ մեկը հիմք չընդունելով և տարբեր, ոչ ավանդական այլ դիտանկյուններից հուշարձանի ըստ էության քննությունը:

Եզրակացություն

Ազաթանգեղոսի Պատմության դեպքում ժամանակի խնդրի կարևորությունը, թերևս, ավելի մեծ է, քան մատենագրական մյուս հուշարձանների դեպքում: Ինչպես տեսանք, գիտական ուսումնասիրություններում այն «լողում է» ավելի քան հինգուկես (410–465) տասնամյակի մեջ: Իսկ նկատի ունենալով, որ եղել են ու կան այս գործը նախապես հունարեն և հենց Տրդատի քարտուղարի ձեռքով գրված լինելու մասին տեսակետներ, ուրեմն այն «լողում է» մեկուկես դարի (IV–V) մեջ: Մինչդեռ թվագրման տասնամյակների տարբերությունը (դարի առաջին տասնամյակներ, դարի կեսեր թե երկրորդ կես) որպես ելակետ ընդունելը շատ մեծ նշանակություն ունի այս (և ցանկացած այլ) աղբյուրի գրության առաջնային քաղաքական շարժառիթներից սկսած մինչև նրա հաղորդած տեղեկությունների իմաստավորման, ստուգության, բազմաբնույթ այլ հարցերի ուսումնասիրման ու գնահատման առումով: Առավել ևս, երբ այս երկը վերաբերում է Հայոց պատմության ամենաշրջադարձային իրադարձությանը և պետք է ծառայեր դրանից հարյուր տարի հետո նույն խնդրի վերջնական լուծումն ի կատար ածելուն:

Այսինքն՝ նույն կերպ պետք է վարվել նաև Ազաթանգեղոսի Պատմության դեպքում. որպես հարցադրման ու հետազոտման հիմք պայմանականորեն մի կողմ դնել նրա ոչ միայն ստեղծման «լողացող» ժամանակի խնդիրը, այլ նաև հեղինակ/հեղինակների, թարգմանիչ/թարգմանիչների, խմբագիր/խմբագիրների մասին տեսակետները և գործը քննել ըստ էության: Այլ խոսքով՝ առաջին հերթին իր ժամանակի առաջնային քաղաքական օրակարգի դիտանկյունից նայել երկի որակներին, ստեղծման շարժառիթներին, ստեղծագործական աշխատանքին, կառուցվածքին, ներքին տրամաբանությանը, դրան վերապահված դերին և այլն: Նման քննության արդյունքները օգտակար կլինեն նաև այս գործի ստեղծման ժամանակի ու հեղինակ/հեղինակների հարցերի որոշակիացման համար:

Աշոտ Սարգսյան – պ. գ. թ., Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) V–XIV դարերի Հայ մատենագրության ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրություններ՝ V–XIV դդ. պատմագրություն, Հայ քաղաքական մտքի, Ղարաբաղյան շարժման պատմություն: Հեղինակ է 5 մենագրության և 21 հոդվածի:

ashot.sargsyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1968, Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 694 էջ:

Ազաթանգեղայ Պատմություն Հայոց. 1909, աշխատությունը Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, Արագածոտիկ Մնացական Մարտիրոսյանցի, 474 էջ:

մեկը բնագրական ընդմիջարկություն համարելու (տե՛ս Ս ա ռ գ ս յ ա ն. 2024թ., 140–141):

Ազաթանգեղոս. 1983, Հայոց Պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 549 էջ:

Ադոնց Ն. 2007, Մարգական Վասակը պատմաբանների դատաստանի առաջ, Երևան, «Հայրենիք» հրատ., 24 էջ:

Բիւզանդացի Ն. 1900, Կորին Վարդապետ և նորին թարգմանութիւնք. Գիրք Մակաբայեցոց, Եվթաղ Աղեքսանդրացի, Ազաթանգեղոս և Փաւստոս Բիւզանդ. հանդերձ դիտողութեամբք, տեղեկութեամբք և լուսաբանութեամբք, Տփղիս, Մարտիրոսյանց տպարան, 520 էջ:

Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. 1957, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ծեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 224 էջ:

Ջարախանայան Գ. 1889, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ–ԺԳ), Վենետիկ, Մխիթարյան տպարան, 783 էջ:

Հայ ժողովրդի պատմություն. 1984, հ. 2, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 687 էջ:

Հայոց պատմություն. 2018, հ. 2, գիրք 1-ին, Երևան, «Զանգակ» հրատ., 704 էջ:

Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան. 1904, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, Մարտիրոսյանց տպարան, 211 էջ:

Մալխասյանց Ստ. 1940, Խորենացու առեղծվածի շուրջ, Երևան, Արմֆանի հրատ., 154 էջ:

Մալխասյանց Ստ. 1982, Բանասիրական ուսումնասիրություններ, Երևան, Երեվանի համալսարանի հրատ., 318 էջ:

Մատենագիրք Հայոց. 2003, հ. Բ, Անթիլիաս, Լիբանան, 2601 էջ:

Մարտիրոսյան Ա. 1982, Մաշտոց (պատմա-քննական տեսություն), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 442 էջ:

Մովսէս Խորենացի. 1991, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը եւ ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի նմանահանութիւն, Լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երեւան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 485 էջ:

Մուշեղյան Ա. 2012ա, «Ազաթանգեղոսի Պատմությունը», ստեղծման հանգամանքները, գրության ժամանակը և հեղինակի հարցը. – ՊԲՀ, № 1, էջ 196–222:

Մուշեղյան Ա. 2012բ, Գրիգոր Լուսավորչի անվան և պաշտամունքի խորհրդապաշտական արգելքը 430-ական թթ. ասորի կաթողիկոսների օրոք. – «Բանբեր Մատենադարանի», № 19, էջ 21–44:

Պատմութիւն Սեբէոսի. 1979, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 446 էջ:

Սարգիսեան Բ. 1890, Ազաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, ս. Ղազար տպարան, 416 էջ:

Սարգսյան Ա. 2023, Հայ պատմագրության ուսումնասիրման քաղաքական դիտանկյան ներածական հարցեր. – «Բանբեր Մատենադարանի», № 35, էջ 158–188:

Սարգսյան Ա. 2024ա, Հայոց դարձի երկրորդ փուլը. հիմնական քաղաքական օրակարգը սպասարկող Ծրագիր. – «Բանբեր Մատենադարանի», № 38, էջ 48–73:

Սարգսյան Ա. 2024բ, Իդեալական պետության նախարարական կառույցն ըստ Մովսէս Խորենացու. – Նուրբ և լայն գրեանք (Տոնագիր նվիրված Էռնա Մանեա Շիրինյանի 70-ամյակին), Երևան, Մատենադարանի հրատ., էջ 121–143:

Սարգսյան Գ. 1966, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսէս Խորենացին, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 259 էջ:

Սարգսյան Գ. 1997, Մովսէս Խորենացու «Ողբը» նոր մեկնաբանությամբ. – ՊԲՀ, №1, էջ 119–130:

Սարգսյան Գ. 2006, Պատմագիտական ուսումնասիրություններ, կազմեց և խմբագրեց Պարույր Մուրադյանը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 259 էջ:

Տաշեան Հ. 1891, Ազաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ազաթանգեղայ գրոց, Վիեննա, Մխիթարեան տպարան, 159 էջ:

Տէր-Մկրտչեան Գ. 1896, Ազաթանգեղոսի աղբիւրներից. Յիշատակ դատակնքաց Գորիա և Շմոնի վկայից որ վկայեցին յՈւռնա, Վաղարշապատ, ս. էջմիածնի տպարան, 91 էջ:

Տէր-Մովսիսեան Մ. 2018, Պատմութիւն Սուրբ Գրոց հայկական թարգմանութեան, ռուսերենից թարգմանեց Սուսաննա Նահապետեան, խմբագրեց և ծանոթագրեց Գէորգ Տէր-Վարդանեան, էջմիածին, Մայր աթոռ սբ. էջմիածնի հրատ., 320 էջ:

Տեր-Պետրոսյան Լ. 1980, Հայ-ասորական հարաբերությունների մեծագույն հետազոտողը. Ե. Տեր-Մինասյանի 100-ամյակի առթիվ. – «էջմիածին», փետրվար–մարտ, էջ 64–69:

Տեր-Պետրոսյան Լ. 1984, Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, «Սովետական գրող» հրատ., 58 էջ:

Տեր-Պետրոսյան Լ. 2019, Ազաթանգեղագիտական պրպտումներ, Երևան, «Անտարես» հրատ., 230 էջ:

Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս. 1933, Վենետիկ, Տպարան սրբոյն Ղազարու, 295 էջ:

Փափստոս Բուզանդ. 1968, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, «Հայաստան» հրատ., 350 էջ:

Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան. 2002, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 1076 էջ:

Март Н. 1905, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием, Арабская версия, С. Петербург, тип. Императорской академии наук, 211 с.

Agathangelos. 1976, History of the Armenians, Translation and Commentary by R. W. Thomson, Albany State university of New York Press, 527 p.

К ВОПРОСУ ОБ ОСНОВАХ ДАТИРОВКИ «ИСТОРИИ АРМЕНИИ» АГАФАНГЕЛА

АШОТ САРГСЯН

Р е з ю м е

Ключевые слова: Агафангел, «История Армении», историография, политическая повестка, датировка памятника, политическая мотивация, Григорий Просветитель, Хоренац, Корюн, «Золотой век».

При определении времени создания памятников средневековой историографии первостепенное значение имеют свидетельства самих авторов. Исходя из этого, «История Армении» Агафангела, начиная с V века, традиционно считалась первым армянским историографическим трудом и датировалась IV веком. Однако свидетельства историков иногда не соответствуют действительности. В таких случаях для датировки исторического

труда привлекаются филологические, текстологические, историко-источниковедческие аргументы. Современная наука, опираясь на подобные исследования, пересмотрела датировку “Истории” Агафангела, отнеся её к V веку. Тем не менее, даже при использовании одних и тех же методов различные исследователи приходят в этом вопросе к неоднозначным выводам: время создания данного труда «колеблется» в промежутке между 410 и 465 гг. Существуют также сторонники более ранней датировки – IV веком, полагающие, что текст изначально был полностью или частично написан на греческом языке, что расширяет «амплитуду» датировки до полутора веков.

Признавая важность подобных исследований для решения проблемы хронологии историографического памятника, следует отметить, что их результаты не могут считаться окончательными для точного определения времени создания труда Агафангела. Более того, они могут послужить препятствием или ввести в заблуждение при оценке данного исторического труда как первоисточника.

На рубеже IV–V веков главным пунктом политической повестки Армении было окончательное распространение и укрепление христианства. Реализация этой повестки стала миссией армянского «Золотого века», в том числе ознаменовавшегося созданием «Истории Армении» Агафангела. Не принимая какую-либо датировку за основу, данный труд следует прежде всего осмыслить с политической точки зрения – с точки зрения мотивов его создания и функциональной роли. Результаты подобного подхода могут стать важным основанием для датировки этого исторического памятника или подтверждения какой-либо из существующих датировок.

Ашот Саргсян – к. и. н., старший научный сотрудник отдела изучения армянских текстов V–XIV веков Института древних рукописей им. Месропа Маштоца (Матенадаран). Научные интересы: историография V–X веков, история армянской политической мысли, Карабахского движения. Автор 5 монографий и 21 статьи. ashot.sargssyan@gmail.com

ON THE ISSUE OF THE BASES FOR DATING THE “HISTORY OF ARMENIA” BY AGATHANGELOS

ASHOT SARGSYAN

Summary

Keywords: Agathangelos, “History of Armenia”, historiography, political agenda, dating of a monument, political motivation, Gregory the Illuminator, Khorenatsi, Koryun, “Golden Age”.

When determining the time of creation of medieval historiographical monuments, the authors’ own evidence is of primary importance. On this basis, “History of Armenia” by Agathangelos, since the 5th century, has been traditionally

considered the first Armenian historiographical work and was dated back to the 4th century. However, the evidence of historians sometimes does not correspond to the reality. In such cases, philological, textological, historical-source study arguments are used to date a historical treatise. Modern science, relying on such research works, has revised the dating of the "History" by Agathangelos, considering it to be written in the 5th century. Nevertheless, even when using the same methods, different researchers arrive at ambiguous conclusions on this issue: the period of creation of this historiographical work "fluctuates" within the interval between the years of 410 and 465. There are also proponents who date the text to the 4th century; they believe that the work was originally written entirely or partially in Greek, which expands the dating "amplitude" to a century and a half.

While accepting the importance of such research works for solving the problem of the chronology of a historiographical monument, it should be noted that their results cannot be considered final for accurate determination of the time of creation of the work of Agathangelos. Moreover, they can become an obstacle or mislead when evaluating the given historical work as a primary source.

At the turn of the 4th–5th centuries, the central point of the political agenda of Armenia was the final spread and reinforcement of Christianity. Realization of this agenda became the mission of the Armenian "Golden Age", which was marked, among other things, by creating "History of Armenia" of Agathangelos. Without taking any dating as a basis, this work should first and foremost be comprehended from a political point of view – from a point of motives for its creation and its functional role. The results of such approach could become an important basis for dating this historical monument or confirming any of the existing datings.

Ashot Sargsyan – Candidate of Historical Sciences, Senior Researcher at the Department of Study of Armenian Texts of the 5th–14th centuries of the Institute of Ancient Manuscripts (Matenadaran) after Mesrop Mashtots. Scientific interests: historiography of the 5th–10th centuries, history of Armenian political thought, the Karabakh Movement. Author of 5 monographs and 21 articles. ashot.sargssyan@gmail.com